

ՏԱՆՏԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուրջ կէս տարվանը 6 բուրջ: Առանձին համարները 5 կողէկով: Փոփոխում գրվում են միմիայն խմբագրատան մէջ: Օտարաբարաբացիք զինում են ուղղակի Կոստանուպոլիս քաղաքում «Մշակ»:

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10-2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից): Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով: Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կողէկ:

ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ՄՇԱԿ

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԼՐԱԳԻՐ

(ՏԱՆՏԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

ԱՌՆԱՐԿԱՅ 1883 ՔԻՒՆ

Կը հրատարակվի նոյն դիրքով և նոյն պարագանայով:

ՊՐՕԳՐԱՄԱ

I. ՏԵՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԱՎՐՈՒԹԻՒՆՆԵՐ: II. ԱՌՆԱՐԿՈՒԿՈՂ ՅՕՒՈՒԱՐՄՆԵՐ: III. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Ընդհանուր յօդուածներ, թղթակցութիւններ, լուրեր: IV. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Ընդհանուր յօդուածներ, թղթակցութիւններ, լուրեր: V. ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ: VI. ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ: VII. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Ֆելիտոն, վեպեր, կիցնուրոյն և թարգմանական յօդուածներ զիտուածան ամեն ճիւղերից, թղթակցութիւններ: VIII. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ԲԱՏԱՆՈՐԿԱԳԻՆ: Տարեկան 10 բուրջ, վեց ամսուայ 6 բուրջ, իւրաքանչիւր ամսուայ 1 բուրջ: ՀԱՏՈՎ համարները 5 կողէկ: ՀԱՍՅԵՆ: Կոստանուպոլիս, թեմակա «Մշակ»:

Խմբագիր — Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ Համախոս: Նամակ խմբագրին: Ներքին լուրեր: ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Թուրքիա: Նամակ թղթակցից: Արտաքին լուրեր: ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ: ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՆԱՄԱՌՈՒՅ

Նոյեմբերի 15-ին

Պ. Մուրացանը «Մեղու» լրագրում զեւտղած «Հայ բողոքականի ընտանիք» վերնագրով իր վերագրածութեան մէջ նկարագրելով մի գերզատա- նի աղետալի վիճակը և նրա անասոր ամարդի և անխիղճ վարմունքը, որ կարելի է վերաբերել հնադարեան բարբարոս վարմունքին, շօշափում է մի ամբողջ համայնքի պատիւը: Բանաստեղծը իր վկայով դարձեալ մի նոր վիճ է բացում կրօնա- կան խնդիրների պատճառով իրարից բաժանված հայերի մէջ: Նա վառում է թշնամութիւն, առե- լութեան հուրը և բողբոջում ժողովրդի տղեւ մասի զայրոյթը դէպի իր արիւնակից այլադա- ւան եղբայրները, թոյն է ատում ազգի միութեան զաղափարի մէջ, այն ինչ ազգի բաժանված ան- ղամները փոքր առ փոքր նմանելի կերպով ըսկ- սել էին իրար մօտեան: Յատով սրտի պիտի ա- սնում, որ այ. Մուրացանի պէսները պատճառ են լինում ազգի կեղծարարութեան, մարդասիրական զգացմունքի խանգարելուն: Բայց սաքա մի նոյն ժամանակ իրանց հաշի մէջ պահելով, աւելի ջնառում են ազգին և եկեղեցուն, քան թէ օդ- նում: Նրանք յօնքը շինելու փոխարէն աչքն էլ կուրացնում են: Վասնորոյ ապագայ լուսաւորակ սերունդը տեսնելով զրանց գործունէութիւնից ա- ռաջ եկած ջնասքը, ցատկով է յիշելու նրանց յի- շատակը:

Եթէ այ. Մուրացանը և նրա նմանները հեռա- տես լինէին, ազգի երջանկութիւնը աչքի առաջ ունենալով, փոխարէն ժողովուրդը դէպի իրանց արիւնակից այլադաւան եղբայրները գրգռելու, աշխատելու սեր և միտովին քարոզելու, աւելի պիտի շահէին յօդուած ազգի և եկեղեցուն: Բանդի կեղծարարական անխիղճ սիրտի փայտաքանդի մէջ այլա- դաւան հայերը ժամանակով պիտի մօտեանային ի- րանց բոլոր զաղափարներով իրանց արիւնակիցնե- րին, առանց ընդարձակելու կրօնափոխութեան շրջանը: Այս միայն այդ միջոցով և ոչ թէ ուրիշ կերպ կարելի է կրօնափոխութեան առաջին առ- նել: Սա անուրանալի ճշմարտութիւն է, որ հալա-

ճանքը, առեկութիւնը և զրպարտութիւնը աւելի նպատակ են կրօնափոխութեան, քան թէ նրան զաղափարները: Հայրամանց շնորհիւ ըստ մեծի մասին Գրիգորին մի հաս եկեղեցին այսօր բաժանված է հազար ու մի եկեղեցիների և աղանդների: Հայրամանց շնորհիւ այսօր կանգ- նած է Համախոս մի հայ-աւետարանական լու- տերական եկեղեցի:

Նայն լրագիր 112 համարում կարդում ենք Հա- մախոս հաղորած լուրը, իբր թէ մատակցիները շատելոցի տաճիկ Հայ-Գուրալից 60% պարտք փող վեր առնելով և չը կարողանալով դուրս գալ մի այլպիսի ծանր պարտքի տակից, զիտում են լուտերականներին և ստանալով նրանցից ի- րանց պիտոյքը կամայ ակամայ ստիպում են լուտերական դատաւորութիւն ընդունելու: Պատմում էին, որ ամեն ինչ լսելով մի այլպիսի զրպարտութիւն իրանց դէմ, խօսում են իրար մէջ, թէ հիմա հաւատում ենք, որ ամեն ինչ, որ առում են աւետարանականների վրա շինուած սուտեր են: Պիտի խոստովանած, որ սա մի շօ- շափելի ջնաս է, որ տալիս են ոմանք իրանց յօ- դուածներով այն եկեղեցուն, որի պաշտպանու- թեան մէջ աղանդներ են ներկայանում: Քանզի մի այլպիսի լուր լսելուց յետ անկասկած մասա- րեցի երկու կողմի հայերը, որոնք հակամիտված լինելով դէպի աւետարանական եկեղեցին, բայց տակաւին տարուբերվելով իրանց մտքերի մէջ, աւելի կը հատուտվեն իրանց համոզմունք- ներում: Սրանից ընթերցողը կարող է եզրակաց- նել, թէ որքան ջնասարեք կարող են լինել այն մանրամասնութիւնները, որ վերայիշեալ վեպի մէջ նկարագրվում են, իբր թէ լուտերական քա- ղողիցները մարդկանց փողով են որսում: Վայ այն քրիստոնէի զլիւն, որ նա փողով պիտի Աստուծուն պաշտէ և վայ այն բարոյցին, որ Ա- ստուծու խօսքը առաւօտուրի է դարձրել:

Եթէ զամսովում է աշխարհիս երեսին բողբոջ- կան հայերի մէջ որ և իցէ մի անհաս, որ ոսկե- րիչ Գրիգորի (վեպի հերոս) պէս բռնութիւն է գործ դնում սրա և նրա կրօնական համոզմունքի դէմ, նա ոչ թէ բրիտանուայ չէ, այլ և հեթանո- սին էլ վատ է և զղուելի: Քանզի քրիստոնէու- թեան Հեղինակը ինքն անգամ բռնութիւն գործ չը դրած. վասնորոյ նրա հետեորդներ ևս չը պի- տի գործ դնեն:

Մենք այնքան չենք զարմանում այդ վեպապա- նութեան վրա որքան զարմանում ենք, որ բանի- մաց ու լուսաւորեալ անձինք ևս ընդունում են այդ վեպը իբր կատարված իրողութիւն: Թէ որ սա ճիշտ իրողութիւն է, որ շատ կարելի է ինչ պէս եղել են աշխարհիս երեսին Յուդայներ, վա- սակներ և շատ երեւոյցաւոր անհասներ, ապա

կարող են ևս լինել անխիղճ, բարբարոս Գրիգորներ, ուտտի ցանկալի էր խանալ ո՞վ է այդ Գրիգորը, որ ժամանակ և ճրտեղ է կատարվել այդ անցքը: Նաև ո՞վ է այն հայ փաստորը, որի հետքն ան- դամ տեսնված է կովկասում: Լրագրութեան մի- ջոցաւ ճիշտ տեղեկութիւններ հազարներով սրա համար հեղինակը աւելի հաստ է կը լինի իր նպա- տակին:

Ինչոր վերաբերում է այ. Չամբակյանին, Բա- զուկը նոյն լրագիր 188 համարի մէջ հազարած լուրին, պիտի ասած, որ զենեալ սուպերինանե- ղենալ չէ յանդիմանած Բազուկ բողբոջական հա- յերին, թէ ինչու որքա Աւետարանի վրա խաչ չունեն, քանզի լուտերական եկեղեցին ինքն ևս չու- նի նոյնը: Բայց ճշմարտութիւնը սա է. Բազուկ մէջ կան հայ և գերմանացի աւետարանականներ, որքա ցանկութիւն յայտնելով մի եկեղեցի կառուցանե- լու, չեն համաձայնիլ իրար հետ յետապայ խնդրի մէջ: Գերմանացիները պահանջել են, որ Գրիգորու- թի խաչելութեան պատկերը, ինչպէս զրանց մէջ ընդունված է, ունենան եկեղեցուն, բայց հայերը չեն համաձայնիլ: Վասնորոյ զենեալ սուպ. խոր- հուրդ է առեւ ինչպէս, քանի որ եկեղեցին չեն շինել, առաջուց բաժանվին գերմանացիներից և ունենան իրանց առանձին եկեղեցին, փաստորը և ուսումնարանը, իսկ գերմանացիները իրանցը, իւ- րաքանչիւրը պահելով իր խղճի և համոզմունքի ազատութիւնը: Գերմանացի սուպերինանեղէնալ ի- րաւունքը չունէր հայ-աւետարանականներին յան- դիմանելու այդ բանում, քանի որ զրքա լուտե- րական եկեղեցու ծայր անցնելիս պարտութիւն են ստացել նոյն եկեղեցուց խղճի կատարեալ ա- զատութիւն պահել քանի մի բացառութիւնների մէջ, վասնորոյ զենեալ սուպ. ևս չէ կամցել ճիշտ խղճի և համոզմունքի ազատութիւնը: Նա ճանաչելով հայերին աւետարանական, լուտերա- կան եկեղեցու անդամներ, որոնք է, որ Բազուկ այժման գերմանացի փաստորը միայն հայերին ծառայէ: Ուրեմն այսուհետ Բազուկ հայ-աւե- տարանականները կունենան իրանց առանձին ե- կեղեցին, փաստորը և ուսումնարանը, առանց խառնվելու գերմանացիների հետ:

Լ. Փիրբողոքեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 21 նոյեմբերի

Շատ անգամ մեր պարբերական թերթերը մեր զպրոցական հարցերին վերաբերեալ ամեն տեսակ յօդուածներով ու թղթակցութեանց չը կարողանա- լով տեղ տալ իրանց էջերում, ստիպված են ե- ղել մերժել այլպիսի գրութիւնները, պատճառ քերե- լով, որ կեանքի մէջ հազար ու մի տեսակ խըն- դիրներ կան յարուցանելու և մշակելու: Մասամբ, ի հարկէ, այդ ճշմարիտ է. որովհետեւ մեր զպրո- ցական աշխարհում այնքան հարցեր կան քննա- դատելու, այնքան պակասութիւններ լրացնելու, այնքան ցուրտ բռնութիւն և այնքան զեղծմունք մտարկելու, որ եթէ մեր թերթերը իրանց կէտը նուիրելին այդ հիմնարկութեան և առհասարակ զրա- կանական խնդիրներին, — այդու ամենայնիւ չէին կարող ամենքին զոհ կացուցանել:

Մեր գրականական և զպրոցական գործը, մա- նասանց վերջին ժամանակներում, մի այնպիսի զօրեղ զարկ է ստացել, որ միշտ ու միշտ առաջ գնալու շարի մի է կանգնած: Այստեղ ինքն իրանց կողմից մի մասնադիտակեան թերթի կարեւ- րութիւն, մինչև անգամ անհրաժեշտութիւն է առաջ զարկաւ: Եւ անհ ստեղծվում է «Վարժա- րանը»:

Բայց նորան ապրիլու և իր գործը կատարելու համար կեանք է հարկաւոր: Իսկ կեանքը, ամեն- քին յայտնի է, որ մեր օրերում միայն մի միջո- ցով է ապահովվում — փողով: Փողը: Կա «Վար- ժարանից» չափ ու շատ առաջ հարկաւոր է ուրիշ լրագիրներին: Ինչ պէտք է անել ուրեմն: Թող

նենք, որ նա որ կողմից եկել է, այն կողմը դնայ: Բայց դա միայն մեր բարոյական ոյծերի թուլու- թիւնը կապացուցանէ. դա մի դատն արժամար- հանք կը լինի մեր մտաւոր աշխարհի կողմից լուսաւորութեանն ու յառաջդիմութեանը ուղ- ղված: Վերջապէս դա մեր անհոգութեան ու ան- տարբերութեան մի փայլուն ապացոյց կը լինի:

Սակայն պահանջը կայ. կարևորութիւնը զգա- լի է: Մի մանկավարժական թերթ անհրաժեշտ է մեզ, թէ «Վարժարան» լինի դա և թէ մի ուրիշ անուն կրող: Խօսք չը կայ, որ այդ թերթի տա- րածվելու և մեղանում արժատ բռնելու մի զըլ- խաւոր արդիւնաւիթն էլ նորա յատկութիւնն է: Մինչդեռ մեր միտ թերթերը ամեն տեսակ խըն- դիրներ են յարուցանում ու քննում, «Վարժարանը» մեր բազմաթիւ ու բազմաանակ կարիքներից մի- այն մէկն է շօշափում, որով և նա անմատչելի է դատուած առանց նորա էլ մեր լրագրական տա- կաւարժիւ բաժանուրդների մեծ մասին: Հրատարա- կում մնում են միայն ուսուցիչները և մի քանի զօրծին համակրող անձինք: Բայց մենակ ու- սուցիչները կարող են ապահովել նորա կեանքը. ուսուցիչները, որոնք մեծ մասամբ դուռ իրանց կեանքը չեն կարողանում ապահովել:

Արդէն «Վարժարան» 4 համարը լոյս է տե- սել, բայց, որքան մեղ յայտնի է, այդ ամսագիրը՝ դեռ ևս 200 բաժանուրդ չունի: Մենք կարծում ենք, որ այդ պակասութիւնը կարող են լրացնել իրանք զպրոցները, որոնց բարոյութեան հա- մար թերթը արդէն սկսել է իր աշխատանքը: Տա- րեկան 5 ր. նորա համար, որ մի զպրոցի ջնասք ուսուցիչները և նոյն անհեր կարգուն, բան տա- վորեն ու իրանց գործը աւելի հաստատ հիմքի և զեղեցիկ սկզբունքների վրա առաջ տանեն, — մեր կարծիքով, մեծ բան չէ և ամեն ուսումնարան կարող է հանել: Գուցէ, մեղ ասեն, որ մեր ծխա- կան և վերական ուսումնարանները մէջ շատ շատերը վերին աստիճանի ջնասք են, աղքատ են: Թոյլ տանք, որ այդպիսի ուսումնարաններ էլ կան. բայց չէ որ կան և այնպիսիք, որոնք համար մեծ ծանրութիւն չէ տարեկան 5 ր. վճա- րելը:

Ինչպէս այ. Ա. Երիցեանի հրատարակած մի տեղեկագիրը երևում է, ուսանալոց բոլոր թե- մերի մէջ մենք ունենք ընդամենը 330 դպրոց և 832 ուսուցիչ: Եթէ այդ զպրոցներից զէվ 200-ը և բոլոր ուսուցիչներից միայն 300-ը կարողանան ու կամենան բաժանուրդաւորվել «Վարժարանին», այն ժամանակ միայն զպրոցներն ու ուսուցիչները կարող կը լինեն ապահովել մեր միակ մանկա- վարժական ամսագրի գոյութիւնը: Էլ չենք յի- շում մեր Տաճկաստանի ու Պարսկաստանի զըլ- րոցներն ու ուսուցիչները. Էլ չենք յիշում այն հանգամանքը, որ որքան և լինի, հասարա- կութեան ընթերցող դասից էլ կը գտնվին մար- դիկ, որոնք նոյնպէս կօջնեն «Վարժարանին» յա- ռաջադիմութեանը, չէ որ ամեն ծնող պարտա- կանութիւն է համարում իր որդուն վարժարան ուղարկել:

Մենք հաստատ համոզված ենք, որ «Վարժարա- նի» խմբագրութիւնը, որի նպատակը միայն և եթ կրթութեան մեծ գործին ծառայութիւն մատուցանեն է, թէ ուսուցիչների և թէ զպրոցների գործը թեթեւացնելու համար, պատ- րաստ է այդ 5 ր. նման մաս առ մաս ընդու- նելու, երկու անգամով, և մինչ անգամ մի մի րոսւրլիով: Միայն թէ գործին համակրողները իրանց կողմից չը խնայեն ըստ կարողութեան օգնութիւն հայնել: Մեծապատիւ թեմական տե- սուցներին, ուսուցիչներին և միանգամայն զպրոցա- կան վարչութեանց խորին ուշադրութիւնն ենք հրաւիրում այս հանգամանքի վրա:

Միթէ, յիբաւի, մեր բոլոր թերթերը պէտք է դատապարտված լինեն ծնվելուց յետոյ չուտով մեռնելու: Մինչև երբ: 8. Նազարեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ ուղարկված է հետևեալ նամակը: «Ձեր լրագրի № 214 մէջ տպւած նամակը Ներքինի նախարարի որդեգիրները վրա, անաչառ և իրաւացի կատարողութիւնները իր մէջ: Արդիւնք զո՞ւ էլ պիտի լինի ձայն բարբառոյ յանապատի, թէ ոչ: Թէ որդեգիրները այդ դպրոցում ներքին և հիւանդոտ, այդ կարող են վկայել ոչ միայն բժշկները, բայց և ամեն ոք որ տեսած է որդեգիրներին: Ներքինի նախարարի հիւանդանոցը տարվայ մէջ միայն արձակուրդներին է փակ լինում: Արդեգիրները մինչև 4 ժամ դասերից յետոյ թողուն են գանձուհիս, անուրանալի է: Երբ որ հիւանդութիւններից ամենատիրապետին է այդ դպրոցում թողալու: Շատերը, նոյն իսկ բժշկները խտտովանվել են, որ դպրոցի նմանապէս և սեղանատուրը պէտք է քանդել և նորոգել: Պէտք էր թույլ տալ, որ զոնէ մինչև ճաշ որդեգիրները իրանուէր ունենային մանգալ, խտտակ օղ ծծիկ: Ոչ մի որդեգիր, ձեռքը սրածին դրած, է կարող հաստատուել ասել թէ կատարելապէս առողջ է: Պէտք է վերջապէս դիտարկել որդեգրութիւնը վերանայ դպրոցից և պահուն ստիպելովն: Արդեգիրները չարտնակ հագում են, մտէք որ և է դասատուն և կը լսէք որ աշակերտներից մի քանիս չարտնակ հագում են և իրանց հարկով ընդհատում են դասատուութիւնը, որոնք որդեգիրներն են: Բարեհաճեցէ՛ք գալ մի օր և մնալ այն թողում և ազակամոված օգուտ, ընել մի դիտարարութեան կից գանձուհի նմանապէս, — և կը տեսնէք որ դուք էլ կը սկսէք հազար: Զարմանալի է որ գտնուում են միջոց ունեցող մարդիկ, որոնք դուրսը չեն պահում իրանց դասակներին, այլ յանձնում են նրանց որդեգրութեանը: Արդեգիրներն ուղղը կը բեք այդքան արթուն և թաքն է, որքան երթեմքներն: նրանք դասերի ժամանակ միշտ ներնոււ են, ուրին ուղղորդմամբ չեն կարող հետեւ դասերին, այդ կը վկայեն բոլոր ուսուցիչները: Այդ երևոյթի մէջ մեզուտը որդեգրական կեանքն է: Ինչպէս որքան պահանջներ որ որդեգիրը ուսման մէջ երթեմքների նաւասար առաջադիմութիւններն են, — դա անհարկ է: Բայց արդեօք այդ բոլորի վրա հոգաբարձութիւնն ու տեսուչը դարձնում են որ և է ուղղորդիչ: — ոչ: Նրանք, երբի, աւելի կարևոր բաներով են զբաղված:»

Թիւրքաց շայստանից ստացած մամուլային նամակից քաղում ենք հետևեալը: «Ներքինի նախարարի կողմէն արդարացիօրէն ֆանատիկութիւնը դրողել և արևելքից և արևմտքից Երևան-Արագածոտնը սկսեց արձույթ քարձարման և ճարտարապետային սարգէն հոռւագիտի նախարարից և թիւրքերը իրանց հաշտ մէջ սխալվեցան: Միայն ուղղելու համար զօրք ուղարկվեցան չէկի ղէմ, նրա բանակը նուաճելու համար: Բայց այդ մեծամարտաբարձութիւնը բանակը կազմված էր ընդամենը 300 մեկ և սոված զինուորներից, որոնք մի քանի ամիս ապրեցան ժողովրդի հաշտ, աւերելով դիտար: Ոչ մի կռիւ տեղի չունեցաւ թիւրքերի և չէկի զօրքերի մէջ: Շէյխը թողեց անմիջապէս Հէքիարի և գնաց Մուսուլ, իսկ զօրքերը իրանց սեղը դարձան: Մահմադականներն առհասարակ և թիւրք ժողովուրդը մասնաւորապէս, շատ թուրքացած, ընկած և յուսահատված են:»

«Մշակի» երկկից համարում «Թատրոնասը» ստորագրութեամբ տպված, խմբագրի ուղղված նամակի մի տեղի հետ մենք բողբոջին համահարմար չենք: «Իշխան Ամատունի կրքը տարի շարունակ, առում է նամակագիրը, ստիպված էր մարտիկ ամեն տեսակ դժուարութիւնների դէմ: Մենք արդէն ճաղար անգամ ասել ենք և կրկնում ենք, որ իշխան Ամատունի սպանեց և թաղեց հայոց թատրոնը: Այժմ կուղեւորները հարցունք ինչ դժուարութիւնների դէմ մարտում էր իշխանը: Հասարակութիւնը յանձնեց նրան նայել 8 հազար բուրլ, որ գնացին պ. Պապի գրգայնը, հասարակութիւնը նրա թատրոնին տալիս էր իւրաքանչիւր տարի մինչև 20 հազար տարեկան և կամուտ, հասարակութիւնը, չը նայելով, որ անհաշիւ և չուայ կերպով տարվեցաւ թատրոնը և վերջը անհետացաւ, անդամներ ներկայացնում էր ընդհանուրութեան ուղղորդող իշխան Ամատունուն, երբ այն պատճառով, որ նա մտքից բանալ պարձը ինձ իրանուէր է տալիս մարգարթատուր: Կ. Պապից բերված թատրոնական յիշատակը, որ մտքի աղատութիւնը, որին դուք այ-

ժրմ պաշտպան էք հանդիսանում, վերջ է վերջոյ իր ոյժը ձեզ դէմ կը դարձնի: Գուք առում էք որ այդ աղատութիւնը էական կերպով անարժեք է կառավարութեան համար, որպէս զի արևատուր լինեն զիջումները, որպէս զի դործնականապէս վնասն տնտեսական և հասարակական շատ հարուցեց: Եւ կատարելապէս ձեզ հետ համահարմար Բայց ինչ միջոցով կարող էք դուք նշանակել մասուրի օրգաններին այն սահմանները, որոնց շըրջանից դուրս նրանց քննադատութիւնը չը պէտք է անցնի: Ինչ միջոցով դուք ինքնուր կը պաշտպանէք ձեր դործողութիւնները լրագիրների պատրաստութեան և յարձակումների դէմ: Արդեօք պատրաստ էք դուք տանել յարձակումների ամբողջ ծանրութիւնը, առանց ձեզ պաշտպանելու և առանց դրա համար հարձակուել լրագիրները: Գրանից է կախված ամեն բան: Եթէ դուք և ձեր յարձակողները տուրան կերպով կը տանէք ընդդիմարութիւնը, յարձակումները և թշնամական ցոյցերը ձեր դործողութիւնների դէմ, որպէս մի նիւտրնեքի, — այն ժամանակ ձայն ասեցէ՛ք, որ օրէնքի համար և այն ժամանակ այդ օրէնքը մեծ օգուտ կը բերի երկրին: Բայց եթէ դուք արամադիր էք չարտնակ կը լինի ձեզ դէմ, — այն ժամանակ աւելի լաւ է չընդունէք օրէնքը, որով հետև նա կը պատճառի ձեզ մեծ դժուարութիւններ, որք մի քանի ամսում այդ օրէնքի հետքն էլ չէ թողնի: Իսկ ինչ որ ինձ է վերաբերում, ես հանդիսաւոր կերպով պարտաւորութիւն եմ յանձն առնում, որ իմ միտատրութեանը վերաբերեալ հարցերին ես չեմ պահանջի լրագրիների համար ոչ մին այն պատիժներից, որոնք նախազօծված են մասուրի վերաբերութեամբ նոր օրէնքի մէջ:»

Թիթիկ ԽՍԻ երկրիական հիւստատուր հարցրեց մի գրի նամակի հետ բեյրութիական Գէնու քաղաքում առաջիկայ 1883 թիւ մարտ և ապրիլ ամիսների լինելի այդուրեքներն միջազգային կոնգրէսի յանձնատնակին հետեւել շրջաբարձարմանը, որ քաղված է այդ յանձնատնակի արձանագրութիւններից: Այսպէս ասելով տալ ամեն ազգերի այդուրեքներն ներկայացողներին մի միջոց իրանց աւետարական փոխադարձ յարաբերութիւնները ընդարձակելու և իրանց ընդհանուր շահերը մանրամասն վիճարկութեան օգնութեամբ ճըշդորէն մշակելու, առաջիկայ 1883 թիւ ապրիլ ամիսին լինելու է միջազգային ժողով այդուրեքների թէլգրաֆի Գէնու քաղաքում: Ժողովի ծրագիրը առանձնապէս կը հրատարակվի: Այդ ժողովի բացվելը ընկնում է ուղիղ այն ժամանակին, երբ բացվելու է նոյն քաղաքում այդուրեքներն հիւանդանոց միջազգային հանդիսը, որ կազմակերպելու է երկրադործութեան և բուսականութեան թաղաւորական ընկերութիւնը: Կոնգրէսի անդամներին յարգելու համար տեղի ունենալու են այլ և այլ առնամատրութիւններ և լինելու են արշաւանքներ դէպի Թէլգրաֆի ամենահանաւոր այդուրեքական կենտրոնները:»

Կիրակի 21-ին նոյնիմանի Արծրանու թատրոնում կայացան թիթիկի ղումայի համար ձայնաւորներին ընտրութիւնները, երրորդ կարգի ընտրողները: Ընտրվեցան հետևեալ անձինք: 1) Գ. Մուրիցով, 2) Ե. Խոսրով, 3) Ե. Զուբալով, 4) Ք. Պ. Գլաւալցի, 5) Զ. Թամաշիւ, 6) Գ. Կարապետով, 7) Ք. Ե. Վերպիլով, 8) Ի. Մովսիսով, 9) Գ. Սլէյխանով, 10) Ե. Բովիսով, 11) Ք. Զ. Վարդանով, 12) Գ. Տէր-Ատատուրով, 13) Զ. Ելիմիրով, 14) Ի. Կորոզով, 15) Մ. Թամաշիւ, 16) Գ. Երազով, 17) Ք. Գ. Բարա, 18) Ե. Խոսրով, 19) Վ. Զիարով, 20) Կ. Կուրբանալի, 21) Ե. Նիկիտով, 22) Ա. Բարանով, 23) Կ. Նիկիտով, 24) Վ. Կանդուրով:

«Тяжелы Объявления» լրագիրը լսել է, որ քաղաքային երկրորդ կարգի ընտրողներ, Ե. Զուբալով, Գ. Կ. Կ. Վերպիլով, Մ. Արաքովի և Կ. թէլգրաֆի անդամներին ներկայացրին նախագահներին որ երկրորդ կարգի ձայնաւորների ընտրութիւնների ժամանակ մի քանի անկանոնութիւններ են կատարվել:

Թիթիկուում հրատարակվող «Юрид. Обозрение» արտատրութիւնը արտատպել է առաւ լրագիրներից հետեւել կտորը: «Իշխան Գորչակով 1868 թիւն հետեւել ճառ ասեց միւսիտոնների խորհրդի մէջ, մասուրի նոր օրէնքի քննութեան ժամանակ: Ամեն մի պրոբկտ, ասեց իշխանը, որ ճշտում է մտքի աղատութեանը, կը գտնի իմ մէջ մի մըշնորհակալութեան ուղղորդող իշխան Ամատունուն, երբ այն պատճառով, որ նա մտքից բանալ պարձը ինձ իրանուէր է տալիս մարգարթատուր: Կ. Պապից բերված թատրոնական յիշատակը, որ մտքի աղատութիւնը, որին դուք այ-

ժրմ պաշտպան էք հանդիսանում, վերջ է վերջոյ իր ոյժը ձեզ դէմ կը դարձնի: Գուք առում էք որ այդ աղատութիւնը էական կերպով անարժեք է կառավարութեան համար, որպէս զի արևատուր լինեն զիջումները, որպէս զի դործնականապէս վնասն տնտեսական և հասարակական շատ հարուցեց: Եւ կատարելապէս ձեզ հետ համահարմար Բայց ինչ միջոցով կարող էք դուք նշանակել մասուրի օրգաններին այն սահմանները, որոնց շըրջանից դուրս նրանց քննադատութիւնը չը պէտք է անցնի: Ինչ միջոցով դուք ինքնուր կը պաշտպանէք ձեր դործողութիւնները լրագիրների պատրաստութեան և յարձակումների դէմ: Արդեօք պատրաստ էք դուք տանել յարձակումների ամբողջ ծանրութիւնը, առանց ձեզ պաշտպանելու և առանց դրա համար հարձակուել լրագիրները: Գրանից է կախված ամեն բան: Եթէ դուք և ձեր յարձակողները տուրան կերպով կը տանէք ընդդիմարութիւնը, յարձակումները և թշնամական ցոյցերը ձեր դործողութիւնների դէմ, որպէս մի նիւտրնեքի, — այն ժամանակ ձայն ասեցէ՛ք, որ օրէնքի համար և այն ժամանակ այդ օրէնքը մեծ օգուտ կը բերի երկրին: Բայց եթէ դուք արամադիր էք չարտնակ կը լինի ձեզ դէմ, — այն ժամանակ աւելի լաւ է չընդունէք օրէնքը, որով հետև նա կը պատճառի ձեզ մեծ դժուարութիւններ, որք մի քանի ամսում այդ օրէնքի հետքն էլ չէ թողնի: Իսկ ինչ որ ինձ է վերաբերում, ես հանդիսաւոր կերպով պարտաւորութիւն եմ յանձն առնում, որ իմ միտատրութեանը վերաբերեալ հարցերին ես չեմ պահանջի լրագրիների համար ոչ մին այն պատիժներից, որոնք նախազօծված են մասուրի վերաբերութեամբ նոր օրէնքի մէջ:»

ԱՐՏԱՌԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐԻՍ

Կ. Պալից «Polit. Corresp.» լրագրին գրում են նոյնիմանի 17-ից: Հէջը որ մեծ պետութիւնների նոր դեպոսիտներից մէկը հասնում է այստեղ, թիւրքաց շրջանների մէջ յոյսեր են ծագում արևելքային դործի ընթացքի փոփոխութեան մասին: Թիւրքերի կարծիքով դերմանական նոր դեպոսիտ Ֆոն-Բազովից իր համեատ և հասարակ ձեռնով յիշցնում է մի մեղք, որ մի հարուածով կարող է շարդել ահագին հաստուութեան երկակը: Թիւրքերը սովորութիւն ունեն լրտեսների օգնութեամբ տեղեկութիւններ հաւաքել այն բոլորի մասին, ինչ որ կատարվում էր Պերսի մէջ: Առանձին հետաքրքրութեամբ տեղեկութիւններ էլն հաւաքում այն բոլորի մասին, ինչ որ առում էր Ֆոն-Բազովից միւս պետութիւնների ներկայացուցիչներին հետ խօսակցելու ժամանակի: Այդ բոլորի մէջ ոչինչ դադարէք չը կայ և առհասարակ Գերմանիայի արևելքային քաղաքականութիւնը կատարելապէս յայտնի է, որքան զարմանալի է, որ այդ քաղաքականութեան մասին ամենքը կարողանում են տեղեկութիւններ ստանալ: Բ. Գուբըր ջաւելով իմացաւ, որ Գերմանիան կատարելապէս հրաժարվում է Արևելքի մէջ առաջնակարգ դեր խաղալուց: Ամենին յայտնի է, որ սուլթանը սաստիկ ցանկանում էր համոզել Գերմանիային դաշնակցութիւն կապել Թիւրքիայի հետ և որ Գերմանիան այդ համոզութեան ազդեցութեամբ քննադատվում էր համար: Ընդհակառակը Գերմանիան ամեն մի յարմար դէպքի ժամանակ յայտնի է, որ միւս պետութիւնների շահերը Արևելքի մէջ աւելի նշանաւոր են, քան թէ իր սեփական շահերը: Այժմ սուլթանը համոզվել է, որ Գերմանիան հետևում է միայն Քերլինի կոնգրէսի քաղաքական նախադրին, որի ժամանակ իշխան Բիսմարկ ձայն ասեց յօ-

գուտ թիւրքաց կոյսերութեան պահպանելու: Քէպէտ Ֆոն-Բազովից շատ լաւ ընդունելութիւն գտաւ սուլթանից, այնուամենայնիւ սուլթանի համար պարզ է, որ Ֆոն-Բազովիցին էլ յանձնված որ և է բանակցութիւն սկսել թիւրքաց կառավարութեան հետ եզրակարգական հարցի վերաբերութեամբ: Նոյնպէս և Քերլինի մէջ ոչինչ բանակցութիւն է կատարվում թիւրքաց դեպոսիտ Մաադուլա-բէյի հետ: Առհասարակ թէ Բ. Գուբը և թէ այստեղի դիպլոմատիական շրջանները հաւատարմութեամբ են, որ Ֆոն-Բազովից թիւրքաց քաղաքական մարդկերանց հետ դեռ ևս չէ խօսակցել այս կամ այն քաղաքական հարցի վերաբերութեամբ:

Այնու ամենայնիւ զերմանական նոր դեպոսիտի Կ. Պալից հասնելուց յետոյ, սուլթանը կարողացաւ մեկնել գերմանական քաղաքականութեան իսկական բնաւորութիւնը և հակացաւ, որ Գերմանիան միւս պետութիւնների օրինաւոր շահերի հակառակ է կամենում առաջնակարգ դեր խաղալ արևելքի մէջ:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՍԻՍ

Վան, հոկտեմբերի 29-ին

Ինչ կը սպասէք դուք Տաճկահայաստանի մի կենտրոնական քաղաքացի—Վանից, անշուշտ ապահովութիւն երկրի ազգաբնակչութեան, կեանքի և անվտանգութեան վիճակ, ուսումնարանաց բարոյական և նիւթական յառաջադիմութիւն, մրցումն ընդդէմ նախապաշարման և ծանր լուծերի թօթափումն, այդ, դուք և պատուական «Մշակի» ընթացողները լի յոյսերով կանխակից Տաճկահայաստանի, մասնաւոր 61-եր, յօդուածի բարեփոխմանց դործողութեան: Բայց այս մեր սպասած անդորրութիւնը եթէ ազգայնու շարտադրին պահելու մեր յոյսեր, ներկայումս երևալայական են:

Վանիցուց ստացուածին պէս զարձակ նոյն ասնոր և նոյն սանդրի կտաս, դարձեալ յետադիմութիւն, դարձեալ ճշուններ բարոյապէս և նիւթապէս, դարձեալ զեղապիս և քաղաքային միակերպ ախտվախի մէջ, և արդարն է ասել մի տասնեակ տարից յետոյ Վանը կենթադրութեամբ մի կերպ զգուշ և միանալութեամբ դարձուրել իշխող տրամադրութեան ներքոյ, դու ևս երեսուն տարուայ այն աղաքական կուսակցութեանց հետքերը կը տան հարուած ազգի ամեն մի վարչական դործքերին, և կը խանդարեն հասարակաց անդորր վիճակ:

Փախաբանօք ցանկանում էի վերադառնալ հայրենիքս, տեսնել նրան փոխարկուած իր հին ուղղութիւնից, անցնելով Հին-Բայազետից, այդ հասարածանօթ կոտորածին կենթակալ քաղաքի աւերակներ և ժողովրդան ներկայ անհաստատ վիճակը նկատի ունելով, որոյ քայքայուած ուսումնարանի վտաւոտուն և դուրսի պատանիների աշխուժութիւնը, նոյնք բարոյական ձգտում զգուլի սրտերի խորքերը թափանցում են, ունելով ինձ հետ մի ծանր տպաւորութիւն, մտայ Վան հոկտեմբերի 12-ին:

Տասնհինգ օր միակերպ ես զիտեղի երկրի նիւթական և բարոյական վիճակ, հայր և թիւրքեր միմանց հետ ինչ ստիպանի յարաբերութեանց մէջ լինելը, կառավարական շրջաններում եղած քրիստոնեայ և ոչ—քրիստոնեայ պաշտօնատարաց վարվողութիւնները, անզուժ վաշխատուների շաղաքաւ ձեռք և նորա քաղաքականութեամբ տողտող հայ զեղջկականաց վրայ, որոյ մի դործողութեան ես իսկ պահանատես եղայ, թէ ինչպէս նոյնից մինը մի անելու դիւզացու քանի մի օրավար հողին տէր եղաւ, և երկրորդ էլ աչք մի միայն հետս վարձելով մտայ իմ ուսումնարաններ, ինչ տեսայ, ինչ տեսի, ինչ շօշափեցի, ոչ ոչ միւսիտարական չեմ, ոչ միայն մեր ազգ, դործիչների նպատակն է օրինոր դէպի լաւս յառաջադիմել, այլ նոյն իսկ կառավարութեան պաշտօնակատարները, անտարբեր են իրանց հպատակաց բարօրութեան, զքաք քանդելու ասելի վարձ են քան շինութեամբ, միայն ներկան և օրական հացը մտածելով:

Աղք. առաջնորդարանը կայ թէ չը կայ՝ մի և

նոյն է թէ կառավարութեան և թէ նոյն իսկ հայի աչքին, անտեսել ամեն զիմոյները չը ստանալով բաւականութիւն, երբորք անգամ էլ կարելորութիւն չեն տալ մուտ գործել այդ պաշտօնական հաստատութեան մէջ, այլ կը դիմեն թիւրքի դատաստանին: Ինչպէս անէ խրիմանս ա հայրիկը երբ ժողովների պատուելի անդամների որակը չեն միանայ գործելու, երբ կիրակոսի շինածը Մարկոսը կը քանդէ, երբ նոքա երկուքը միմեանց հակառակ սկզբունքի կը ձուռայնին: Բայց սրանց մի հինգ տաս սարի առաջ, առաջնորդարան կու ված պաշտօնական տեղը, որքան ևս յիշում և կորված ու վճարված դատերը և դատաստանները ոչ միայն հայի, այլ և կառավարութեան աչքին մեծ նշանակութիւ ունենին, թէ վաղնի, թէ Կարնոյ կառավարչական բարձր շրջաններում պատկառելի էր իր թաղմատիւմին գործունէութեամբ:

Քաղաքական ժողովը կունենայ երբեմն իւր սովորական նիստերը, բայց ամբողջացէ խոտակցութիւններ ևս. եթէ դրան նոքա շատ թաղերներ առ տեղական կառավարութիւն, կամ անպատասխանի կը մնան և կամ անգործադրելի այժմ նոցա գլխավոր դեղմունքն է ընտրել մի հմուտ, գործունեայ և բիշ թէ շատ քաղաքագէտ փոխանորդ, որով զուցէ գործերը իւրեանց կարգին մտնեն և ապարդիւն չը մնան: Անցեալ տարուանից նշանակված ուսումնական ժողովը առանց մի որոշ գործունէութիւն և շահ ունենալու թողնելով իւր պաշտօն, այժմ նոյն է հաստատուել. բարեմադիւններ որ ապարդիւն չը մնան, և յուսալի է այս նոր գումարումից օգուտ քաղել, որովհետեւ ներկայումս վաճառել մէջ եկուր ուսումնականաց թիւը բաւական է և հաւաքելը ևս այստեղ բաւականի բարոյական ուժերը. գործելու ապակի էլ կայ, գործին հակառակողներ էլ շատ կան. որտեղ գրիչ ունեցող իր գրիչ պիտի շարժէ և փող ունեցող իւր փողը, տեսնելով փող ծախսելու կրթական գործին համար որքան համոզուած բարեկարգներ կը գտնենք: Ստորոգ է որ առանց նիւթական միջոցների բարոյական ուժերը չեն քալի:

Մանկը այժմ ազգ. կրթական աններ, որտեղից կը սպասենք բարձր ապագայ, որ տեղեւորւմ սովորում են հազարից աւելի մատոյղ աշակերտներ և երեքարբից աւելի շաւիկատուներ յանձնուած քանի շաւիկ ուսուցչաց, չաւննայով և ոչ մի հմուտ ուսուցչուհի կամ վարժուհի: Ուսանողք և ուսանուհիք դատ զատ ուսումնարաններում դեռ նաւապետական հին աշխարհի գրութեան են, իւրաքանչիւրն հետեւելով իր վարժապետի ուղղութեան և հին մէթոդիկային. մի ընդարձակ դանլիճի մէջ գետնորված, ծայրագոտի (մի քանիսը միայն նստարաններ վրայ) մէղրեսական սերտորթութեամբ կուսանին իւրեանց աւանդելիք ուսումը: Մի կողմը հարաճոց է, միւս կողմից կառավարչիւք—ոչ տրայք սուս, լուս, այ սղան, դաստ սերտե, կը ձայնէ. մի քննումս էլ ուսուցիչը, ձեռ, ինչ կրեսս, ատանկ չէ, ձեռ բարձր խօսէ դատքը, հաւաքելով իւր գլխին մի կարգ աշակերտները դասախոսում է անտրայ ժամերով, սկսելով թիւրքերէն ընթացակարգից և դուրթիւնից, կից նորա ազգ. պատմութիւնից, մի երեք ժամ անընդհատ այդիւնելով ուսանողին դասարանի մէջ, չը տալով տան կամ տանհինգ րուպէ դասամիջոց: Բայց սաստիկ վրդովեցայ ես, որ այս տեսակ դասաւարտութիւնները նիստեցի երկու նշանակու ուսումնարաններում, նմանապէս երկու նշանակուր ուսուցչաց դասախօսելու ժամանակ, որոնցից մինը որպէս ուսումնական նորընծայ քահանայ դեռ ևս սղողում էր, և բարձր կը համարէր աշակերտներին ամբողջացել մի ընդարձակ սրահի մէջ նստեցնել և այնպէս դասախօսելի, քան թէ առանձին առանձին բաժանմունքով և որոշ դասարաններում որոշակի ժամերով դասախօսել և տայ թիւքը գրաստիցներ:

Ինչ երկարացնեմ, մեթոդիկա, նորածն դասախօսութիւն, որոշ ծրագիր, ուսումը մարմնացնել աշակերտի սրտում և այլ այսպիսի մանկավարժական պահանջներ, դեռ իրականացել գործադրված չեն այստեղ. դեռ նոյն ուղղութեան և նոյն դրութեան մէջ են, ինչ որ ևս անցեալ 1881 թուականին արձակուրդի ժամանակ վաճառեցին թով արևի իմ համապատեց հակաուղղութիւններ, և որը արատագուրեցա ներկայ 82 թուականի «Արձագանք» շաբաթաթերթի 31 համարում: Եւ մի և նոյն տեղիկագրութեանս մէջ եթէ համարձակութիւն չը լինի ինձ, արև և մի քանի առձեռն առաջարկութիւններ, նոյն և կրկնում և մայտ-

ական «Մշակ» լրագրող միջոցա: Ա. տնօրինել հաստատագրէ ուսանողները ըստ կարողութեան անէլ թոշակագրամ, սովորեցնելով ծնողաց իրանց որդեց դաստիարակութեան համար չը խնայել բիշ թէ չատ գումարներ:

Բ. Այդ միտքն ուսումնարանական յարկերը բաժանել զատ զատ դասարանների (միայն Այր-յարոյց վարժարան տեսայ, այսպէս և Յիսուսեան վարժարանն էլ նոր են սկսել):

Գ. Եկեղեցական պատկանեալ կառավարչից մի քանիսը յատկացնել տեղոյն ուսումնարանների և անկախ եկեղեցական վարչութիւնից յանձնել հոգարարութեան իրաւասութեան տակ:

Դ. Անդրկովկասից հրաւիրել Տաճկանայտ տանի կենտրոնական քաղաքներ մի քանի ուսուցիչներ և ուսուցչուհիներ, գտնեայ կրթամանկավարժական սխառմայով, և այս կողմերից աշակերտներ ուղարկել Վերդեան ձեռնարան կամ Եր-սիսեան դարանոց ապագայ ուսուցիչներ պատրաստելու նպատակա:

Ե. Եթե քանակութեամբ բերել Անդրկովկասից արդի գործադրական դասաղբեր, հրահանգներ և մանկավարժական գրուածներ և գործածել միակերպ տեղոյս ուսումնարաններում. գէթ միայն լոկ կարգալով անգամ կուղղուէին մի քանիսը իւրեանց նախնական դրութիւնից, նորութեան համե ու ճաշակն աւնելով:

Անցնեք այս հարցին վրա խօսելուց, դառնաք հրապարակի խօսակցութիւններից համառօտագէս գրել ձեզ: Մինչև ցայժմ, ի հարկէ, հեռագիրը կամ մասնաւոր նամակները գեղեցիկ են ձեզ Բաղէշ վաճառաչա՛ քաղաքի հազար հարկերից աւելի կրպակաց այրուիլը և ապրանաց տեղոյն արքունի գորբերից և թիւրքերից կողողատուիլը: Մեր սղորմելի ազգայնոց մնասը շատ է թիւրքերի մնասից, տիրադւլ կը տարութեւրին փրատակաց վրա և Վե՛ն. Սուլթանի գործութեան կակնկարէն: Ահողջ մնասը մի միլիոն լիրայի կը հաշուեն, և հաւանական է, որովհետեւ Բաղէշը Տաճկանայտտանի վաճառաչա՛ քաղաքներից առաջինն էր իւր նիւթական միջոցներով. գտնուելով Մոկք, Կորճէք, Տուրքերան, Չորբորջ Զայր և Աղճինք նաճանգաց կետոնատեղում, աւետարական մշակական յարաբերութեանց մէջ էր վանի, Կարնոյ, Տիղրանակերտի, Բերկոյ, Գամախոտի և Միջազիտաց մի քանի բնակիչների հետ, և այդ ամեն քաղաքներից պակաս չեն նոցա կարածան և վաճառականները, բայց այժմ նոցա մեծ հաստութիւնը կամ փրատակաց տակ ոչնչացաւ, կամ աւարի դնաց:

Արքունի տուրքերը խտտագանձութեամբ կը հաւաքուին, և սնդուկը ընդ միշտ դատարկ է, կասն. ամիսներով ուժեղ չը ստացած ծառայողներ և զորականը լոկ փոխարինական ստորապետութիւններով կը մնան, և այդ ստորապետութիւնները շատ անգամ կէս դին կը ծախուին կամ նոյն իսկ գանձապահին, կամ այլ վաճառականի:

Օտմ. դորաց մի ստուար թիւը մինչև ցայժմ դեռ ևս կենտրոնացել է Հիբարի նաճանգին մէջ: Գնեպտե Ե՛նի Կրքուրլարը սաստիկ զբաղեցրել է նոցա. բայց այս քանի մի օր է կը ընկնէ, որ այդ մեծ դերասանապետը թողնուի իւր տեղ, որպէս թէ Մուսուլն է գնացել, որտեղ կառավարութիւնը նշանակել է նորա առանձին բնակութիւն:

Անցեալ օր յատկացել խրիմանս սրբազանի շինած Սանդղտեան օրիորդաց ուսումնարան դնացի, շատ յարմարաւոր մի շինածք և անաչին ուսումնարանական հիմնարկութիւն է վանի մէջ. չորս առանձին դասասանով, երկու առանձնական սենակով, մի ընդարձակ բոլորակի սրահով, որի միջով կարելի է մուտ գործել այդ դասարաններ որոշ դանիքով: Ուսումնարանը կառուցվել է հայոց մի կենտրոնական թաղում, Այդեաստան տեղ, բարձր դիւք ունեցող մի պարոլիզի մէջ, և որ այդ պարտեղը պիտի ծառայէ նա ևս ուսանողս հինիսին որպէս զբոսապալա: Բայց շինութիւնը դեռ մերձայնած չէ, և կարելի է այս ձևաւ վերջացնել, դարնան փառագորտպէս օրհնել նորա լացունս:

Կենտրոնական ուսումնարանը առանձին կը գործէ իւր քաջան հիմնադրի իրաւասութեան ներքոյ դաստիարակելով մօտ 60-ի չափ հասուն աշակերտներ, երբեմն գոյութիւն ունեցող ընկերութիւններից միայն մինը սկսել է գործել և շարունակել իւր բարի նպատակ, «Ազգախօսէր» ընկերութիւն, որը ըստ իմաստ է քանի չափ բաւականի դարգացման հոտ արած պատանիներից և երիտասարդներից. սոքա ունեն տանհինգ օ-

րոյն լարան, որտեղում հաւաքում են նաև ցանկացող ազգայիններ, որտեղ կը լինին երբեմն ատենարանութիւններ, բայց ամենից լաւն ինձ օգտակար թուեց լրագրական կարեոր լուրերի ընթացակարգի թէ քաղ. թէ ազգ. և թէ եւրօպական քաղաքականութիւնից հազորած լուրերի տեղիկութիւնը, որոց աւելի ուշադրութեամբ կը լսէ ունկնդիր հասարակութիւնը:

Ես յատկացել կը խնդրիմ—«Մշակի» յարկի բաժանորդներից, որոնք մի բաժին լիչուալ ընկերութեան նուիրելոյ բարեհաճին «Մշակի» ազգոգուտ թերթիցից:

Առ այժմ թող բաւական համարուի մեր տուած տեղիկութիւն, հրապարակային շնորհակալութիւն յայտնելով ուսւական հօգը տեղութեան տեղս գտնուած զեր. հրապարտ փեմ. կոստանդ կաւսարականի, որը միշտ օգնութեան ձեռք մեկնել է ամեն նեղութեանց մէջ լինող հայի դիմադրելով դանաղան զեղծմանց, պաշտպանելով իրաւունք և արդարութիւն:

Երկրորդ անգամ կը դրեմ ձեզ Աղթամարու ներկայ կաթողիկոսութեան անտարբերութիւնից զեպ իւր վիճակ, լիմ և կոտուց անապատների դրութիւնից, թէ այդ հաստատութիւնները որպիսի բարոյական օգուտ կարողացել են տալ իւրեանց թեմին:

Գ. Երեկ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Եւրօպական լրագիրները հաղորդում են հետևանք: Հաստատվում է այն լուրը, որ քիւրդների շէյխ Ուբեդուլլահ իր ընտանիքով և սուլթանի թիկնապահի ուղեկցութեամբ Մոսուլ ուղևորվեցաւ: Անկաղբութիւնները պարսկական սահմանի վրայ, այնու ամենայնից, չեն վերջանում և ըստ երևոյթի թիւրքաց ամբողջ զորաբաժինը դեռ ստիպված կը լինի երկար ժամանակ մնալ Հէբեթուրի վիլայեթում:

«Գ. Պօլսից հեռագրում են նոյեմբերի 15-ին: Ներքին վաճառականութիւնը կենդանացնելու համար, մտադրութիւն կայ մէկ բանկ հիմնել 40 միլիոն ֆրանկի գրամուլխով: այդ պատճառով վճարված է փոխառութիւն անել, աչքի առաջ ունալով թիւրքաց կառավարութեան անաղին պարտքը: Գումարաբաններին մեծամասնութիւնը կապահովում է և չէ հաւատում, որ փոխառութիւնը կարողանայ կայանալ:

«Փարիզից հեռագրում են նոյեմբերի 13-ին: Օրինակները Փարիզի արուարձաններում կօնֆեկընդյակներ են կազմում վիկար Զիւզօի «Le roi s'amuse» պիէսայի ներկայացման դէմ:

«République Française» լրագիրը այսօր հերքում է «France» լրագրի մերկացումները Գամբելու յալուսում է, որ ինչն բոլոր մանրամասնութիւնները ստացել է «Nouvelle Revue» ամսագրի հրատարակչուց, տիկին Արանից, որը այդ տեղիկութիւնները ստացել էր դաւադրութեան մէջ մասնակցողների մէկից:

«Երևանիցից նոյեմբերի 15-ին հեռագրում են: Նորարարաւազ գէպի Ալէքսանդրիս ուղևորվեցաւ «Տասիւներ» նաւի վրա:

«Daily News» լրագրին Կ. Պօլսից հաղորդում են, որ Բ. Գուսը ամեն ջանք գործ է դրնում գերմանական կառավարութեան հայացքները իմաստաւ համար եզրկական և Տոնիսի խընդիրների վերաբերութեամբ: Բերլինի թիւրքաց զեպան Սաադուլարեյ, նորերումս իշխան Բրամարիկ հետ տեսակցելու ժամանակ, գերմանական կանցլէրը խորհուրդ էր տալի Բ. Գրամը հանդիստ լինել և համբերել, որովհետեւ ներկայ ժամանակում կայսր Ալիէթմի կառավարութիւնը յարմար չէ համարում որ և է ձեռնարկութիւն սկսել յօգուտ Թիւրքայի:

«Բերլինից հեռագրում են նոյեմբերի 16-ին: Գլխաղբօրնում հեղելի պատճառով մէկ տուն քանդակեցաւ: Սպանված են 15 մարդիկ:

«Բուխարէստից հեռագրում են նոյեմբերի 15-ին: «Romanul» լրագիրը հաղորդում է, որ երկէր կրկնայ, երբ Յանիօլի արտասահմանից Բուչուկ վերադառնալով, ուր դրեց բուլղարական հողի վրա, այն ժամանակ նրան խիղճ կալանա-

ւորեցին ժանդարմները, բայց նրան սպասող ամբողջ խեց նրան ժանդարմների ձեռքից և հասնելով տարաւ նրա տուն: Լրագիրը աւելացնում է, որ վախճում են աւելի մեծ անկարգութիւններից:

«Բօննից հեռագրում են նոյեմբերի 16-ին: Քաղաքի ստորին մասը հեղելով է: Օրնոց մասնատրով կայացաւ: Ֆրանկֆուրտից հաղորդում են, որ Չուրը Մայնում բարձրանում է սաստիկ մեծ անձրևների պատճառով:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆՆՑ

ՏԱՄԲՕՎ, 22 նոյեմբերի: Բանկերը սահմանափակեցին փոխառութիւնը:

ՕՐԵՆԲՈՒՐԳ, 22 նոյեմբերի: Երկաթուղու գծի վրա ձայնակցութեւ կան: ԵկատերիսօսլաՎի, Նիկոլայեվի, Ուֆայի և Ցարիչինի մէջ ձևու են, սահմանի ճանապարհ է կազմվել:

ՍԻՄՖԵՐՈՊՈՂ, 22 նոյեմբերի: Այստեղի գանձարանից 42,000 ռ. զողանալու գործի մասին մեղադրվածները կալինիչենիս և Նօվգորօսկի դատապարտված են աքսորանքի Սիբիր: Գուլչենիս արքայացրած է:

ՄԱՐԻՈՒՊՈԼ, 22 նոյեմբերի: Նաւազնացութիւնը Ազովի ծովի վրա դադարեցաւ:

ԻՋՄԱՒ, 22 նոյեմբերի: Բեհզերօ-Գաւազի երկաթուղու գծի վրա ձիւնակցութեւ կան:

Կ. ՊՈԼԻՍ, 22 նոյեմբերի: Նորերումս բացված դաւադրութեան պատճառով սուլթանը անհանդիստ է: Նա փակվել է պալատի մէջ և ընդունում է միայն այն կերակուրները, որոնք պատրաստվում են նրա ներկայութեամբ: Զօրքերի մի նոր բաժին, որ կասկածված է անհաւատարմութեան մէջ գէպի սուլթանը, ուղարկված է Սև ծովի նահանգներին: Նորերումս մինիստր նշանակված Ա.Տ.Ե.Վ.Բիկի նորից արձակված է և առաջին մինիստր նշանակված է Սալիդ-փաշա: Եզրկատուից հաղորդում են, որ լորդ Գեօֆֆրին այլ ևս չի վերադառնայ իր պաշտօնին Կ. Պօլսի:

ԿԱՅԻՒԵ, 22 նոյեմբերի: Զինուորական դատարանը դատապարտեց Արաբի-փաշային մահաւան պատժի, բայց խեղճիլը այդ պատիժը փոխարինեց աքսորի:

ՀՌՕՄ, 22 նոյեմբերի: Թաղաւորը ընդունեց Նէստրոյի բանտերների ընկերութեան պատղամուտորներին, որոնք ներկայացրին թաղաւորին ընկերութեան պատուաւոր նախագահի վկայականը:

Ս. ՊԵՏԵՐՔՈՒՐԳ, 22 նոյեմբերի: «Пра-вит. Вѣст.» լրագիրը հաղորդում է, որ երկէր Սիմեոնովի գունդի սոսի պատճառով կայսրը և կայսրուհին սյցելեցին Ս. Պետերբուրգ: Միխայլովի մանեժը զալով թաղաւորը համբարեց Մեծ Նիսան Ալազուի Սէքսանդրովիչի հետ և ողջունեց գունդին: Գունդի օգնորված ուրան երկար ժամանակ լսվում էր ժողովրդական հիմնի հետ: Զօրստաղից յետոյ օՖիցերները հրաւիրվեցան Աիւչով պալատը Բարձրագոյն նախաձայնիլի:

Կ. ՊՈԼԻՍ, 22 նոյեմբերի: Օսման-փաշա նորից նշանակված է պատերազմական մինիստր, Մուսիւր-բէյ ֆինանսների մինիստր: Միխայլովի կազմակերպութեան մէջ դարձեալ փոփոխութիւններ են լինելու:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԻՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ձրկինանց եկեղեցւոյ ծխական ուսումնարանի հոգաբարձութիւնը պարտք է համարում յայտնել իր ետըն շնորհակալութիւնը մեծապատիւ Ալէքսանդր Ստեփանիչ Անանեանցին, որ բարեհաճել էր մի աստիճան վառելու փայտ նուրբել յիշեալ ուսումնարանին:

1—1

Օրդինատոր Մոսկվայի կայսերական ծննդատան և անուշական տան (Воспитательнаго Дома) երկխոյոց բաժանման բժիշկ, Մինաս ՄԿՐՏԵԱՆՅ ընդունում է կանանց հիւանդութեամբ երկուշորթի, չորեքշորթի և ուրբաթ 3—4 ժամը կեսօրից յետոյ, իսկ առ հասարակ բժշկական խորհուրդ տալիս է ամէն առաւօտ 8—9 ժամը, Լիսիցովի տանը, Սաղովայա և Սերգիեվսկայա փողոցների անկիւնում:

1—3

Նոյեմբեր ամսի 4-ին և 14-ին Ձրկինանց եկեղեցւոյ պատւաւոր ծխական հաւաքովում նոյն եկեղեցւոյ դաւթում նոր բացուած ծխական ուսումնարանի մէջ ընդհանուր համաձայնութեամբ որոշեցին, որ եկեղեցւոյ եկամուտներից տարեկան մի հարիւր քան լուրջի վճարուի նոյն ծխական ուսումնարանին: Նաև որոշեցին եկեղեցւոյ մօտ գտնված կրպակի եկամուտը այսուհետև նոյնպէս յատկացնել ուսումնարանին:

1—1

ԹԻՖԼԻՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՏԵՐԷՆ ԳՐԲԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ վարչութիւնը խնդրում է պ. պ. հեղինակներին և թարգմանիչներին, որ իրենց գրաւոր աշխատութիւնները բարեհաճեն ուղարկել ընկերութեան այս հասցեով. «Въ Правленіе Типографскаго Общества Паданія Армянскихъ книгъ, Фрейлинская улица, домъ Соломона Корганова, кв. № 7.

1—3

ԹԻՖԼԻՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՏԵՐԷՆ ԳՐԲԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ վարչութիւնը խնդրում է ընկերութեան մեծ անդամներին, որ բարեհաճեն վերանորոգելու իրենց տարեկան անդամակցական վճարը. իսկ նոր անդամ գրուել ցանկացողները թող բարեհաճեն դիմել այս հասցեներին. «Աւետարական բանկ» ընկերութեան գանձապահ՝ պ. Մովսէս Թաւադեանին, պ. Յիւրեմ Ծատուրեանի խմբագրին մագաղանք և «Կենտրոնական գրավաճառանոց»:

1—3

Վ. ՇԱՎԵՐԴԵԱՆԻ ԼՐԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԽԱՆՈՒԹԻՒՄ: (Գօլօփինսկի պրօսպեկտ, Ալէքսանդրեան պարտէզի մօտ) ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՎՈՒՄ ԵՆ ԹԷ տեղական, թէ Ռուսաստանի և թէ արտասահմանեան բոլոր պարբերական հրատարակութիւններին 1883 տարուայ համար:

9—10

ՏԵՐ-ԱՐԲԱՐԱՆԻ

Օ Ր Ա Յ Ո Յ Յ

Գինն է 10 կ. գումարով գնողներին 15% զիջում:

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅՈՒՄ:

Նոյն տեղը

Պ. Միանարեանցի «ԲՆԱՐ ՀԱՅԿԱԿԱՆԻ» մնացած օրինակները՝ անկաղճ 2 ռ., կազմած 2 ռ. 50 կ.:

Ցարից աւելի գնողներին 20% զիջում:

(չ. և շ.) 5—6

Նաւթի ՏԱԿՈՒՆԵՐԻ համար օտարեր (КЛЕПКИ ДЛЯ ФОТОГЕНИЧЬХ БОЧЕКЪ) ցանկացողներին թէ պատրաստի և թէ ուղած չափսին պատրաստելու համար խնդրում եմ դիմել Բաթում, ԱՐՇԱԿ ԾԱՏՈՒՐԵԱՆՅԻՆ:

Въ БАТУМЪ, Аршаку ЦАТУРОВУ.

10—20

ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒ

ՆՈՐ ՕՐԱՅՈՅՑ

1883 թ.

Կը տպուի Մոսկվայում մեծ թերթի վերայ լիտօգրաֆիայով գունաւոր և շրջանակը ազգային հին և նոր յիշատակների և նշանաւոր անձինքների պատկերներով զարդարուած: Բաժանորդագիրն է մի օրինակի համար 1 ուրբի: Ցանկացողները կարող են դրուել «Մեղուի» խմբագրատանը, օտար քաղաքացիք նոյնպէս:

Յօրինող՝ Մ. ՏԵՐ-ՄԱԹԷՈՍԵԱՆ

Թեմական վերատեսչի թղթաւթեամբ Հաւաքարում բացվեցաւ Ս. Գրիգոր Լուսաւորչի եկեղեցւոյ Ս. Հռիփսիմեան անուանով օրիորդական ուսումնարանը, որը գտնվում է Էջմիածնեցւոց եկեղեցւոյ հանդէպ տիկին Նազարեանցի տանը (որ առաջ դէպօ կը): Սրանով հոգաբարձութիւնը յայտնում է յարգելի հասարակութեանը, որ աշակերտահինների ընդունելութիւնը սկսվել է ներկայ նոյեմբերի 12-ից. իսկ հանդիսաւոր բացումը իր ժամանակին կը յայտարարվի լրագրներում:

Հոգաբարձուք. Սարգիս Եղիզարեան, Աղասի Մէլիք-Ալիաղանց, Գեորգ Թարխանեանց:

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԹԱՏՐՕՆ

ԷՃԱՆԱՅՐԱՄ ԳՆԵՐՈՎ

Հինգշաբթի, նոյեմբերի 25-ին, Հայերէն ներկայացումն մասնակցութեամբ

Պ. Մ. ՆԱԻԱՍԱՐԳԵԱՆԻ

Առաջին անգամ

ՍԻՐՈՅ ՓՈՒՍՐԷՆ ՍԷՐ

Կրամա 4 արար. հեղ. պ. ՇՊՈՂԱԳԵՆԻ

Մարկիզ դը-Ֆրեյբուրգի դերը կը կատարէ պ. ՆԱԻԱՍԱՐԳԵԱՆ

2—3

Ընթացող մանկավարժական «ՎԱՐԺԱՐԱՆ» ամսագրի № 4.

Բովանդակութիւն: Փ. Վարդանեան.—Սպենսերի մանկավարժական մտքերը (չարունակութիւն): Յ. Չիգրանեան.—Տարարութեան ուսումնարաններ: Ա. Բաշաթեան.—Երկու օրինակելի դաս սրբազան պատմութիւնից: Ս. Պալասանեան.—Ազգային պատմութիւնը տարրական ուսումնարաններում (չարունակութիւն): Ղ. Աղայեան.—Հարկաւոր է արդեօք ը հնչելու օժանդակութիւնը գրագիտութիւն ուսուցանելիս: Ա.Յ. և այլք: Մանկական բաժին, ա) Մանկական հէքիաթ, բ) Ղահվէ, գ) Թաղաւորի նոր զգեստը: Զուարճալիք, Հանելուկներ, Խնդիրներ:—Յայտարարութիւններ:

«Վարժարանի» տարեկան գինն է հինգ ռ. տարին սկսվում է օգոստոսից և տեւում է մինչև յունիսը:

Ստորագրուել կարելի է խմբագրութեան գրասենակում, պ. Ծատուրեանի խանութում և վ. Շահվերդեանի պապիլիոնում:

КАВКАЗСКОЕ ОТДѢЛЕНИЕ ГОЛОСА ОТКРЫТА ПОДПИСКА НА ГАЗЕТУ

«ГОЛОСЪ»

На 1883 годъ

Подписная цѣна съ пересылкою въ годъ 17 р. Подписка и объявленія принимаются въ Центральной Книжной торговлѣ въ д. Мириманова.

3—3 (1)

ՕՐՈՍՏՈՍ ԱՄՍԻ ՄԷԿԻՑ

ՍԿՍԵՑ ՀՐԱՏԱՐԱԿՎ ԵՒ ՎԻԷՆԱՅՈՒՄ

L'ORIENTAL

ՅՐԱՆՍԵՐԷՆ ԹԵՐԹԸ, ԱՄԻՍԸ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ:

«Փառնալ զ'Օրիան» լրագրի հին բաժանորդներին դադարեցրած թերթի տեղ կուղարկվի այդ նոր հրատարակութիւնը:

«L'Oriental» թերթի տարեկան գինը 8 լուր է, կէս տարինը 4 լուրը: Գրվել կարելի է «ՄԵԱԿ» խմբագրութեան մէջ, կամ ուղղակի Վիենայում դիմելով հետեւի հասարակ հասցեով. Vienne (Autriche) M. F. Salles I. Neuer Markt 9.

ԱՌԱՋԻԿԱՅ 1883 թ. ՅՈՒՆՎԱՐԻՑ ԹԻՖԼԻՍԻՄ ԿԸ ՍԿՍՎԻ ՀՐԱՏԱՐԱԿՎ ԵՒ

«Ա Ղ Բ Ի Ի Ր»

Մի ամսեայ հրատարակութիւն երկսաների, ծնողների և դաստիարակների համար: (Տարէնը ընթացող տեւում է 12 համար 1—3 թերթ)

Բովանդակութիւն

- I) Վէպեր, մանրամասն, զրոյցներ, առակներ, հէքիաթներ, կենսագրութիւններ:
  - II) Բանաստեղծութիւններ:
  - III) Գիտութիւն և արուեստ:
  - IV) Մանկավարժական և այլ յօդուածներ, թղթակցութիւններ, առաջարկութիւններ, լուրեր, խորհուրդներ:
  - V) Հետաքրքիր անդեկութիւններ և խառն լուրեր:
  - VI) Մասնակցութիւն և նոր զրբեր:
  - VII) Կրթութեան և դաստիարակութեան վերաբերեալ յօդուածներ և տեղեկութիւններ:
  - VIII) Զուարճալի մանկական, Ֆրէրլեան, շախմատի և այլ խաղեր, ըբուաներ, թուարանական խնդիրներ:
  - IX) Անեկդոտներ, հանելուկներ:
  - X) Ա.Յ. և այլք
  - XI) Երգեր նոտաներով:
  - XII) Յայտարարութիւններ:
- Տարեկան գինը 3 լուր է, կէս տարինը 2 ռ., առանձին համարները 15—40 կ.: Մանթ. ա) Վէպեր, կենսագրութիւններ և այլն կարող են լինել և պատկերներով: Բ) Համարներից աւելի քան վեցի բովանդակութիւնը կարող է միայն և վէպերից կազմուած լինել:
- Գ) Տարեկան բաժանորդները կը ստանան երկու պրեմիա. յունիսին մի պատկեր, իսկ դեկտեմբերին օրացոյց առաջիկայ տարուայ համար:
- Հասցէն, Тифлисъ Редакция «Ахпюръ» իսկ արտասահմանից, Tiflis (Caucase) Redaction du journal «Agbur»

Խմբագիր-հրատարակիչ Տիգրան Նազարեանց: 2—5